ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

---

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 22 հունվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Լյուդվիկ Ամիրյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Լյուդվիկ Ամիրյանը 10.01.2018թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ Սահմանադրության 1, 3, 69, 71-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385 հոդվածի 1-ին մասը, որը չի սահմանում, որ արդարացման կամ պատժի ակնհայտ մեղմացման հիմքերի և հիմնավորումների առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանը դատական ակտը կայացնում է անկախ բողոքում դրանց մասին պահանջ ներկայացնելու հանգամանքից»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռով դիմումատուն դատապարտվել է ազատազրկման՝ չորս ամիս ժամկետով: Սույն դատավճռի դեմ բերվել է վերաքննիչ

բողոք, որի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը մերժել է այն՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնելով ուժի մեջ: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը մերժվել է ՀՀ վճռաբեկ դատարանի 27.06.2017թ. որոշմամբ:

3. Դիմողի՝ վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ փաստարկները հանգում են հետևյալին: Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթի իրավակարգավորումների շրջանակում գործում է «չկա պահանջ, չկա նաև բողոքի բավարարման հնարավորություն» սկզբունքը:

Դիմողի կարծիքով՝ եթե ցանկացած վերաքննիչ բողոք կարող է իմաստավորվել և բավարարվել միայն ներկայացված պահանջի առկայության դեպքում, և այս կարգն ամբողջովին ընդունելի է քաղաքացիական դատավարության շրջանակներում, ապա քրեական և վարչական դատավարությունների շրջանակներում այն կիրառելի չէ, հատկապես այն դեպքերում, երբ խնդիրը վերաբերում է հանցակազմի բացակայության հիմքով քաղաքացուն պատասխանատվությունից ազատելուն կամ ակնհայտ խիստ պատիժը մեղմացնելուն: Նման դեպքերում, ըստ դիմողի, վերաքննիչ դատարանը չպետք է կաշկանդված լինի բողոքում պահանջի առկայությամբ:

Դիմողը նշում է, որ արդարադատություն իրականացնելիս վերաքննիչ ատյանում անմեղ անձն արդարացման փոխարեն չպետք է ենթարկվի պատժի մեղմացման միայն այն պատճառով, որ գիտելիքների պակասի կամ մեկ այլ նկատառումով արդարացման փոխարեն բողոքով պահանջել է միայն պատժի նվազեցում:

4. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն ներկայացնել որպես խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկում:

Այսպես, վիճարկվող իրավակարգավորման համաձայն՝ վերաքննիչ դատարանը

դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Վերաքննիչ բողոքը և վարույթ ընդունելը» վերտառությամբ 381-րդ հոդվածը, ամրագրելով վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջները, սահմանել է, որ վերաքննիչ բողոքը, ի թիվս այլնի, պետք է պարունակի «...բողոքի հիմքերը և պահանջը, վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները...»: Օրենսդիրը նաև ամրագրել է, որ վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում, և դրանք չեն կարող փոփոխվել և լրացվել գործի դատական քննության ընթացքում: Այսինքն՝ անձը վերաքննիչ բողոք բերելիս վերաքննիչ բողոքում պետք է հստակորեն շարադրի վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները, ինչպես նաև դրանցից անմիջականորեն բխող կամ չբխող պահանջները: Ընդ որում, օրենսդիրը վիճարկվող դրույթում դատական ակտի վերանայման սահմանները պայմանավորել է միայն վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, այլ ոչ՝ պահանջով, ինչպես փաստարկում է դիմողը: Խնդրո առարկա գործի շրջանակներում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2017 թվականի մարտի 23-ի որոշման մեջ արձանագրել է, որ՝ «... ՀՀ վերաքննիչ դատարանն ընդունում է պաշտպան Վ. Խաչատրյանի փաստարկը՝ ամբաստանյալ Լ. Ամիրյանի խնամքին մինչև տասնչորս տարեկան երկու երեխաներ գտնվելու հանգամանքը՝ որպես նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող, ինչպես նաև նրա անձը դրականորեն բնութագրող տվյալները պատշաճ կերպով չարձանագրելու հարցում Առաջին ատյանի դատարանի կողմից դատական սխալ թույլ տրված լինելու մասին: Ինչը, սակայն, Լ. Ամիրյանի մեղքի գնահատման տեսանկյունից որևէ նշանակություն չունի, իսկ պատժի տեսանկյունից դրան անդրադառնալը զուրկ է իրավական արժեքից, թերևս հենց միայն այն պատճառով, որ այն դուրս է վերաքննիչ բողոքի ինչպես հիմքերի և հիմնավորումների, այնպես էլ պահանջի շրջանակներից...»:

Վերոշարադրյալի համատեքստում դիմողի պնդումներն առ այն, որ՝ «... հակառակ ՀՀ վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների, բողոքն ունեցել է ինչպես հիմք, այնպես էլ՝ հիմնավորում...», վկայում են, որ խնդրո առարկա գործի պարագայում դիմողի նկատմամբ առաջացած անբարենպաստ հետևանքը պայմանավորված է վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքում ներկայացված հիմքերի, հիմնա-

վորումների գնահատման արդյունքում դրանց բացակայության մասին արված եզրահանգումներով, ինչը վկայում է այն մասին, որ դիմողն ընդամենը բարձրացնում է վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափության հարց:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց ..., ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով:

Հետևաբար, Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու հիմք՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի: Սահմանադրական դատարան դիմելիս դիմողը պետք է հաշվի առնի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 և 69-րդ հոդվածների պահանջները, դիմումում շարադրի իր հիմնավորումները և ներկայացնի համապատասխան փաստարկները՝ ելնելով կոնկրետ գործով վերջնական դատական ակտով իր նկատմամբ կիրառված որևէ օրենքի դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

Լյուդվիկ Ամիրյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

22 հունվարի 2018 Ãí ³ Ï ³ ÝÇ
ê ¸ ¸ Î à/2-2